44. ԱՍՏԸԾՈՒ ԻՐԵՍ ԴՈՐ Ի

Թաքավոր ուր սինոդքեր ժողովեց:

Ինոր իրեք սինոդ կեր. կանչեց բերեց, ասաց. - Սինոդքե՛ր, ծե իրեք բան կասեմ, էմ պատասխան չխանիք՝ ծե վիզ կկտռեմ:

Էն մեկն՝ Աստըծու իրես դեխ դոր ի, էն մեկելն էլ՝ Աստված խըտ ընչին կիրուհի, էն մեկելն ասեր, դյու գինակ՝ էրկնուց աստղերն քյանի՞ ի:

Ասին. - Թաքավո՛ր, մենք չընք գիտի, մենք ռամիկ մարդ ենք, խնդրենք ամիս մը մոհլաթ տու մե, էհանք, երկիրներ պտըտինք, իշկանք, դառնանք ետ, քյո պատասխան տանք:

Ճամբախ ընկյան, մեկ ամիս գնացին, էկան թաքավորի խապրքեր իշ են, մեկ չգիտցան:

Ասաց. - Ով սինոդքե՛ր, աշխար տվիք ման, գնացիք: Պտըտեցիք, էկաք, գտա՞կ էն պատասխան:

Ասին. - Թաքավո՛ր ապրած, շատ շուռ էկանք, շատ պտըտեցինք, պատասխան մեկ տեղ չգտանք:

Ասաց. - Ճալաթքեր, ճալաթքեր, տարեք իդոնք կախեք տարաղաճի վրեն. կրակ դրեք, վառեք, մոխիր քյամուն տվեք:

Քե պես մարդմ էնդեհեն էկավ, ասաց. - Էսա լավ մարդեր ընչի՞ կը կախեն:

Ասին. - Թաքավոր մե իրեք պատասխան տվե, մկա մենք չընք կանա ինոր պատասխան ասե:

- Ինոր պատասխան գիտեք, ի՞շ ի, մեկ-մեկ ա ընծի ասեք:

- Կասի՝ «Աստըծու իրես դեխ դո՞ր ի», կասի. «էրկնուց աստղեր քյանի՞ ի», «Աստված խըտ ընչի՞ն կիրուհի». «Աստըծու մըժուլին խըտ ընչի՞ ի»:

- Չի տարեք, թաքավորի պատասխան տամ, ձե փրցուցեմ գյամ:

Գնացին թաքավորի կյո ասին. - Մարդ կա քյո պատասխան պտի տա, - ասին:

Թաքավոր էդա մարդ կանչեց:

- Էմ պատասխան դյու տը տա՞ս, - ասաց:

- Հրամանքե, ի՞նչ ի, ասա որ ասեմ, էդա մարդեր տարադաճից փլրցուցեմ:

- Մա՛րդ, ես ծնա եմ ասի, - կասի, - Աստըծու իրես դեխ դո՞ր ի, էրկնուց աստղեր քյա՞նի ի. Աստված խըտ ընչի՞ն կիրուհի:

Ասաց. - Մարդ ուր իրես դոր անի, Աստըծու իրես դեխ դեն ի:

Ասաց. - էդ մեկ աղեկ կասես, էրկնուց աստղեր քյանի՞ ի:

էն մարդ էլավ, մոհլաթ առավ, գնաց:

Առատու աղոթր նախառ էկավ, ասաց. - Քյո գլխի մազեր, ասա իշքա՞ն ի: Ես էլ աստղեր ասեմ քե քյանի ի:

Ասաց. - Ես չըմ կանամ խամպրեմ՝ էմ գլխու մազեր քյանի ի, ի՞շ գիտեմ:

Ճուապ տարան սինոդքերաց, ասին. «Վալա, էրկու խապար խանի, մեկ մացի»:

Սինոդքեր վըր էդ խոսաց ուրախացան. - Վալա՛, մե տ'ազատի տարաղաճից, - ասին:

Ասաց թաքավոր էդ մարդուն. - Աստված ընչի՞ն կիրուհի, գիտե՞ս դուն:

Ասաց. - Վեց սահաթ քյո թաքավորութեն տաս ձի, ես քե կասեմ. «Աստված խըտ ընչին կիրուհի»:

Թաքավոր էլավ աղքատ մարդու շորեր խաքավ, ուր թաքավորական շորեր տվեց ինու, ուր թաք տարավ, դրեց ինոր գլխին:

Իլավ, նստավ թաքավորի թախտին:

Թաքավոր էն աղքատ մարդու տեղ գնաց. - Դե, տուր էմ պատասխանին, - ասաց:

Ասաց. - Աստված կը մժուլի էն բանի, կյո քյո թաքավորութեն առեց, տվեց ձի:

Աղքատ մարդ իշ իլավ թաքավոր. - Կանչեք, գյան, - ասաց, - ճալատքեր, խեծելավոր:

Ճալատքեր էկան, կայնան գա, ասին. - Ի՛շ ի, խրամա՛նք արա:

Ասաց. - էդա մարդ շոտ վիրուցեք, տարեք, վիզ կտռեք, գետ թալեցեք:

Թաքավորի վիզ կտռին, թալին գետ, սինոդքեր պրծան, դարձան էկան ետ:

Աղքատ մարդ վիրուցին, առին տարին, նստըցուցին վըր թախտին: